

## Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Ս. Վարդանանց տօնին առիթով (2 փետր.), որ անուան տօնն է ազգիս վեհափառ Հայրապետին, հետևեալ հեռագիրը յղուած է Մայր Աթոռ. —

Երուսաղէմ, 1 փետրուար 1989

Ն. Ս. Օժուրին Տ. Տ. Վազգէն Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Զեղ Սրբուբան անուանուողութեան թանին ուրախ առիթով, հանգեցի ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սաղիմանայ համայնի ջերացիներ շնորհաւորութիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւագոյն բարեմաղութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

### ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆԻ

#### Տ Հ Ի Զ Ո Ւ Թ Ի Ն

25 Մարտ, Շաբաթ, երեկոյեան ժամերգութեան աւարտին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայր վարդապետական չորս ասիւնները շնորհեց Սուրբ Արթուր կրօնք Միաբաններին Հոգե. Տ. Գուսան Աբղ. Ալմանեանի, Հոգե. Տ. Ռազմիկ Աբղ. Պոլոսեանի եւ Հոգե. Տ. Մեսրոպ Աբղ. Ասողեանի: Խառնակակն եւ Հուսաբարապետ Գեորգ. Տ. Գաբելին Արք. եպս.: Վերջին երկուքին մասին գրած ենք ամսագրիս 13րդ էջին վրայ, տնոց ձեռնադրութեան առիթ, իսկ Հայր Գուսան, արքիով կրօնքագոյն Ս. Ուսիս Միաբանութեան անդամներուն, ձեռնադրուած է 1983 թուականին: Ան, հմուտ եկեղեցական երաժշտութեան, այդ ճիւղը կը դասուանդէ ժող. Վարժարանէն ներս եւ նոյն տան կը հետեւի ձայնամարգութեան մասնաւոր դասընթացներու Rubin Academy of Music-ի մէջ: Ի սրէ կը շնորհաւորենք երեւ Հոգե. շնորհ Հայրերը:

### ԵԿԵՂԵՏԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆԲ

● Կիր. 1 Յուն. — Նոր Տարի բար Նոր Տոմարի: Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յարութիւն, մեր վերնամաստան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

● Դշ. 4 Յուն. — Նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ. Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայր: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը Ս. Աթոռոյ շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

● Եշ. 5 Յուն. — Գարի մարգարէն եւ Յակոբայ Տեառնորդ (Տոն Առաքելական Արթուր Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան միջոցին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեառնորդ Ս. Աթոռի պատուանդանին: Ըստ սովորութեան Սրբազանը բարձրադիմութիւնները բար. Ն. Ամենապատուութեան: Օրուան հանդիսաւոր Ս. Պատրիարք Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Պատր. Փոխ. Գերշ. Տ. Կիրեղ Եպս.: Իսկ Գերշ. Տ. Սեան Եպս. Նախագահեց Ս. Աթոռոյ հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Ուր. 6 Յուն. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատեսակին: Տօնին բարձրապատիւը Հայրերն էին Հոգ. Տ. Անուշաւան Վրդ. եւ Հոգ. Տ. Վանիկ Վրդ.:

● Եր. 7 Յուն. — Սեփանսի ճախակային: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, մեր 5 Սարկաւաղներն ու 2 Ուրարակիները, առաւարտի զէշիս եւ բարձրապատիւներն, պաշտուցին յիշատակը իրենց մատակարարին: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայր: Ս. Պատրիարք մատուցուեցաւ աւանդատան — Ս. Ստեփանոս մատարան — Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

● Կիր. 8 Յուն. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յակոբ (Ս. Աժաճնայ խորան): Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ս. Թ. Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Նախատեսակին Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Դշ. 9 Յուն. — Պետրի եւ Պողոսի առաքելոց: Ս. Պատրիարք մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրի վերնամաստան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գուսան Արքիւս:

— Կէսրէի եւ Ս. Պատրիարք Հայրը շարժապատուով մուտք գործեց Մայր Տաճար, ուր նախագահեց մեծահանդէս նախատեսակին եւ թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

● Դշ. 10 Յուն. — Տոն Ս. Որդոցն Արաման: Օրուան հանդիսաւոր Ս. Պատրիարք Մայր Տա-



հարկ Ս. Գլխադիր մատրան մէջ մատոյց Լուսարարացեալ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս, Ապա, Ամեն Սրբ. Պատրիարք Հայրը, Կենաց փայտի մատունքն ի ձեռնին և ամպնոսանի ներքեւ, նախագահեց եռագործ թափօրին, որմէ ետք Միաբանութիւնը երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Պատարագիչ Սրբազանը նշխար բաժնեց բոլորին:

● Եր. 14 Յուն. — Նոր Տաթի քա շին Տոմարի և Ս. Բարսեղի խաչապետին: Կէս գիշերին, Մայրավանքի և Ս. Գարուծեան Տաճարի (Յունաց) զանգերու Ամանորը աւետող զուարթ և միատեղ զօղանէին ետք, Մայր Տաճարի քիւրի մօտ սոսոսող Սարկաւազներն ու ժողովք սաները երգեցին փառք ի բարձունսն, իսկ Հայր Գուսան մենեղեց Վէր, Կեցոնն: Լուսարարացեալ Սրբազանը բնա քանի մը խօսք — Յերեկին, Աւագ խորանին վրայ Պատարագեց և քարոզ մը խօսեցաւ ժամօրհնող Հոգշ. Տ. Անուշահան Վրդ. Զղջանեան (տե՛ս էջ 10): Հայրենական երկրաշարժին պատճառաւ, զանց առնուեցաւ Պատրիարքարանի հանգէսը:

● Կիր. 15 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծեան, մեր վերնամասրան մէջ ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.:

● Դշ. 18 Յուն. — Ճեպղալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 10-20ին, Ամեն Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը պայծառ օդով համբայելաւ զէպի Ս. Ծննդեան քաղաքը՝ Բեթղեհէմ: Յապաղումը արդիւնք էր քաղաքական տխուր զէպքերու բերումով համբու կէսին կատարուած դիմաւորութեան զեղչման: Այս տարի չկային նաեւ սկսուածական խումբեր:

— Ժամը 11ին, Ս. Ծննդեան հրապարակին վրայի դիմաւորութիւնը, ինչպէս նաեւ Տեաչաբանի պատուասիրութիւնը կատարուեցան նախընթաց տարիներու յարեման:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաւրիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շրջապատուով մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար, ուր Ս. Այրի ուխտէն ետք, մեր քառնին մէջ պաշտուեցաւ ճրագալոյցի կարգ, որուն աւարտին Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Այրին մէջ ժամարարն էր (Ամերիկայէն, Ս. Ուխտի Միաբան) Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան: Հանդիսացեալ Սրբազանին նախագահութեամբ կատարուած նախատօնակէն ետք, սինաղարգ գաւիթէն անցնելով, Միաբանութիւնը խորհուրդ մեծը երգելով բարձրացաւ վանքի սեղանատունը՝ ընթրիքի:

— Զորհուրդէն ժամերու զաղարուծէ ետք, գիշերուան ժամը 10-30ին, վերսկսան արարողութիւնը Տաճարի մեր քառնին մէջ:

● Եշ. 19 Յուն. — Ծննդեան և ԱՍՏՈՒԱԾԱՅԱՍՏՈՒԹԻՒՆ: Կէսգիշերին, խորհրդաւոր զանգահարութիւնէ մը ետք, Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն Սրբ. Պատրիարք Հօր, իջաւ Ս. Ծննդեան այրը, ուր կատարուած ա-

րարողութիւնները, 40 վայրկեան, ձայնասփռուեցան Խորայելեան առաօկայանէն: Ներկայ էին Երուսաղէմի և Բեթղեհէմի Քաղաքացեալները (Թէոփ Բօլլէք և Էլիսա Շրէյն) և Բեթղեհէմի Զին. Կառավարիչ: Ապա զոյգ Պատարագներ մատուցուեցան, առաջինը՝ մեր քառնին մէջ Անթիլիասի Միաբան Հոգշ. Տ. Խորէն Արղ. Տոլարամանէն, իսկ երկրորդը՝ Ս. Այրին մէջ, Պատր. Փոխ. Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. է, որ և նախագահեց ճրագահէքի արարողութեան: Արևածագը մօտ էր երբ թափօրով Միաբանութիւնը բարձրացաւ Ս. Ծննդեան հայավանք, ուր նախահաշէն առաջ վարկեց շարքը՝ հոգեպարար հանդիսութեանց:

Բոլորն ալ Երուսաղէմ էին ժամը 7-10ին:

— Երուսաղէմի մէջ, ճրագալոյցի կարգէն ետք, Ս. Պատարագը Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.: Նախատօնակին նախագահեց Տաճարին Տեսուչը՝ Գերշ. Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան:

— Հինգշաբթի առաւօտ, ի Ս. Գալոս հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց և ճրագահէքի կարգին նախագահեց, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսուչը՝ Գերշ. Տ. Սեան Եպս. Ղարիպեան:

— Երկու օրերուն ալ, տեղացի զպրններ վարեցին երգեցողութիւնները:

— Նախատօնակին ի Ս. Գալոս նախագահեց Գերշ. Տ. Սեան Եպս. Ղարիպեան:

● Ուր. 20 Յուն. — Թիւսակ մեկեղոց: Մայր Տաճարի Աւագ Սեղտնին վրայ պատարագեց առժամ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Հանգստեան կարգին նախագահեց Գերշ. Տ. Սեան Եպս.: Նոյնը կրկնուեցաւ ներքին գաւթին մէջ:

● Եր. 21 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Անթիլիասի Միաբան Հոգշ. Տ. Բարդէն Արղ. Զարեան:

● Կիր. 22 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Անթիլիասի Միաբան Հոգշ. Տ. Նշան Արղ. Թօփուղեան:

● Դշ. 25 Յուն. — Նախատօնակին ի Ս. Գալոս նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եշ. 26 Յուն. — Անուամկոյութիւն Տեառն: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր շրջապատուով մուտք գործեցին Ս. Գարուծեան Տաճար, ուր Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Հանդիսացեալ Սրբազանը: Վանք դարձին, սկսելով դիմացի հրապարակէն, թափօր, երգելով լէոյս ի լուսոյ շարահանը, բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Վճօրհնէքի արարողութեան, որ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. գլխաւորութեամբ կրկնուեցաւ սեղանատան մէջ, ուր և օրհնուեցաւ տօնին յատուկ հերիսէի հաշը:



● Ուր. 27 Յուն. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սևան Եպս.:

● Շր. 28 Յուն. — Իննուհինգ Յովհաննու կաթալեթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.:

● Կիր. 29 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Շր. 4 Փետր. — Հայրագեացն Արամայի եւ Գիրգի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրէ-խաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.:

● Կիր. 5 Փետր. — Զեռնադրութիւն երկու արեւաներու (տե՛ս էջ 12-13):

● Շր. 11 Փետր. — Գրիգորի Ասուածարանին Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.:

● Կիր. 12 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Շր. 18 Փետր. — Ողորդ եւ քոռանց Ս. Գր. Լուսաւորին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Արդ. Ալեանեան:

● Կիր. 19 Փետր. — Բարեկենդան Առաջաւորի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ.:

● Ուր. 24 Փետր. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սևան Եպս.:

● Շր. 25 Փետր. — Ս. Սարգսի զօրավարին: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Նորնծայ Հոգշ. Տ. Ռազմիկ Արդ. Պօղոսեան: Սարգիս Կիւլպէնկեանի հոգեւոյն համար կատարուած հանգստեան կարգին Նախագահեց Գերշ. Տ. Սևան Եպս. Դարիպեան:

● Կիր. 26 Փետր. — Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Նորնծայ Հոգշ. Տ. Մեսրոպ Արդ. Ասողիւն:

— Տեառնընդառաջի մեծահանդէս Նախատեսակին և անոր յաջորդող եղանակի առաջին Անդասանին ի Ս. Յակոբ Նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

— Գիշերակիցը, Մայր Տաճարին մէջ պաշտուած եկեղեցւոյ և Հովման կարգերուն Նախագահեց Լուսաւորապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս:

— Այս տարի ևս, քաղաքական փափուկ կացութեան պատճառաւ զանց առնուեցաւ տօնին յատուկ գիշերային խորոյկահանդէսը:

● Բշ. 27 Փետր. — Տեառնընդառաջ: Օրուան հանգիստը Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան (վարժիշ-ուսուցիչը Նորնծաներուն) և քարոզեց (տե՛ս էջ 17):

● Շր. 4 Մարտ. — Իսահակայ Պարբի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

● Կիր. 5 Մարտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Արեղայ:

● Դշ. 8 Մարտ. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսաւորապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.:

● Եշ. 9 Մարտ. — Թ. Վարդանանց զօրավարացն մերոց (Յիւսասկ մեռելաց եւ Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագ եց, ըստ սովորութեան, Ժառ. Վարժարանի և Ընծայարանի Փոխ-Տեսուչը՝ Հոգշ. Տ. Մեսրոպ Արդ. Ասողիւն, որ Ս. Հայորդութիւն տուաւ ուսանողութեան Լուսաւորապետ Տ. Գարեգին Արքեպս. ազգայնաշունչ քարոզ մը խօսեցաւ և ապա Նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. ի անուան տօնին առթիւ կատարուած շնորհակցեցողական Մարթնաքին: Իսկ Ս. Պատարագի աւարտին, Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկ. Նախագահեց օրուան յատուկ հոգեհանգստեան պաշտամունքին:

● Ուր. 10 Մարտ. — Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Երթուղաթմիթափօրները գլխաւորեց և քարոզեց Գերշ. Տ. Սևան Եպս. Դարիպեան: Պատուաւիրութիւն եղաւ Ասորոց Եպիսկոպոսէն:

● Շր. 11 Մարտ. — Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրէ-խաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Արդ.:

— Երեկոյեան Ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարի Սեղանին ու գլխաւոր սրբանկարները վարագործուեցան:

● Կիր. 12 Մարտ. — Բուն Բարեկենդան: Փակեալ-խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Դշ. 15 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծի պանոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Արեւագալի՝ իսկ երեկոյեան՝ Իսաղաղականի առաջին Ժամերգութիւնը:

● Ուր. 17 Մարտ. — Նախատեսակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ (Զեռադրատուն): Հանդիսապետն էր Զեռադրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

● Շր. 18 Մարտ. — Թէոդորոսի զօրավարին: Առաւօտեան Ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Արեղայ:

— Կէսօրէ ետք, Լուսաւորապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհակցեց ժողովուրդին:



Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Երեւելիքն։

● Կիր. 19 Մարտ. — Արամիման։ Գիշերացին և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան։ Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ։ Թափօրապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։ Թափօրականք երգեցին Այլակերպութեան շարականները։

● Եշ. 23 Մարտ. — Մայր Տաճարին մէջ պաշտուած Մեծ Պահոց առաջին Հսկումին նախագահեց և քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։

● Եր. 25 Մարտ. — Կիւրդի երուսաղիմացոյն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրդի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.։

● Կիր. 26 Մարտ. — Անառակին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աճաճնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողկեան։

● Եշ. 30 Մարտ. — Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

### Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Եր. 7 Յուն. — Իտալական Ընդհ. Հիւպատոս Պր. Մարինօ Ֆլէրի այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ապա, առաջնորդութեամբ Պր. Գեորգ Լինդլեանի, այցելեց Մայր Տաճար և վանուցս այլ բաժանմունքները։

● Գշ. 10 Յուն. — Ս. Ուխտիս Միաբան Հոգեշ. Տ. Գեղամ Մ. Վրդ. Զաքարեան Ս. Աթոռ ժամանեց՝ տօնական օրերը մեր մէջ անցընելու համար և Քաջ մինչև Ուր., 27 Յունուար։

● Եշ. 12 Յուն. — Անթիլիասէն (Կիւպրոսի նամրոյ) Ս. Աթոռ ժամանեցին Հոգշ. Տ. Խորէն Արք. Տաղրամաճեան, Հոգշ. Տ. Բարդէն Արք.

Զարեան և Հոգշ. Տ. Նշան Արք. Թօփուղեան, բերելու համար իրենց մասնակցութիւնը մեր Երեւեան հանդիսութեանց։ Մեկնեցան Լինդլ-շարթի, 26 Յունուարի երեկոյեան։

● Գշ. 24 Յուն. — Ժառ. սաներ և ուսուցիչներ պոյոյտի օր մը անցուցին Եաֆա։

— Նոյն օրը, Հոգեշնորհ Տ. Հայրիկ Վրդ. Դաւայնեան ներկայ եղաւ Լաթրոնի վանքին մէջ Թրափոթի հայազգի Հայր Դանիէլի յուզարկաւորութեան։ Հանդուցեալը, Արարատեան Որբանոցի սաներէն, դասընկերը եղած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Եր. 18 Փետր. — Հիւս. Եւրոպայի այլազան երկիրներէ Իսրայէլ ժամանած Լուսերական եկեղեցւոյ քարձրաստիճան հոգեւորականներու խումբ մը այցելեց Ս. Աթոռ։

● Կիր. 19 Փետր. — Նախագահ Հայրմ Հէրցօկի ձափօն մեկնումին առիթով, Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ողջերթի գնաց Գնէւէթի գիմաջի պարտէզը։ Նախագահը կը մեկնէր մասնակցելու համար 7 Յուն. ին վախճանած Հիթօշիթօկայսեր յուզարկաւորութեան։

● Ուր. 3 Մարտ. — Կէսօրէ ետք, Վիլիսդ-դային Աղօթքի Օրոշուան առիթով, Յոյն-Կաթօլիկ եկեղեցին դացին Հոգշ. Տ. Գուսան և Հոգշ. Տ. Ռազմիկ Արեղաներ։

● Կիր. 12 Մարտ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. և Տիար Գ. Լինդլեան ներկայ եղան Զիթենեաց լերան Դալիլիոյ վանքի եկեղեցիին մէջ կայացած Յունական Ընդհ. Հիւպատոս Պր. Էլիաս Մալթէզօսի փոքրիկին Միտրութեան Խորհուրդին, որուն նախագահեց Ամեն. Տ. Տիառնոս Պատրիարքը։

● Բշ. 13 Մարտ. — Ժառ. սաներ և ուսուցիչներ — հոգեւորական թէ աշխարհական — Մեծ Պահոց առաջին օրը անցուցին Թապղայի Հիւրանոցը (Տիբերիա) կատարուած պոյոյտով։

● Ուր. 24 Մարտ. — Երեկոյեան, վաղուան Յունաստանի Անկախութեան 168րդ տարեդարձին առիթով, Հէլլէն Ընդհ. Հիւպատոսին կողմէ նշելընալ պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպսիկ., Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Տիար Գ. Լինդլեան։

